

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՇԱՆՏՐԻ ՅԱՐԵՒԵԼՍ



(Տես հտ. ԾԺ Եջ 538)

ԻԱ

Մենեւում յԱգոշեաց : — Ժամանումն ի մարտտուն Զուղայի : — Այցելութիւն
գերեզմանատան :

18 յունիս. — Ժամը վեցին ճամբայ կ'ել-
նենք ձիաւորեալք, ուղւոյ ընկեր ունելով մեր
ասպնջականքն և բարեկամք, որ փառաւոր
առաջնորդութիւն կ'ընեն մեզ : Վաճառանոցի
մեծ հրապարակին վերայ խոնած է ժողո-
վուրդ, և գլխաւորն՝ ողկերթ կը մաղթէ մեզ,
ամենուն կողմանէ :

Անկեղծ և բուռն ցաւոց զգացմամբ այս
ընտիր անձէն հրաժեշտի ողջունիւ կը մեկ-
նիմք յԱգուշիւն, հիւրամեծար ուղարկած, որ
առաւօտեան այդ ժամուն՝ աւելի քաղցր և
հեշտագին կը թուի ինձ. ուստի և վերջին
ակնարկ մը կը ձգեմ հաճոյատեսիլ ամառա-
նոցացը և բուրաղութիւն պարտիզաց, և ուր
աստին անդին կը բարձրանան վայելուչ եւ
կեղեցիաց զանգակատունք, և կը խառնուին
կարաւանին մէջ :

Զուղա տանող ճանապարհը նեղ կիրճէ մը
անցնելով կը մտնէ լաւ միակուած և արգա-
ստեր սարահարթ մը, 1230 մետր բարձրու-
թեան վերայ, ուստի կը տեսնուի հեռուէն Եւ-
րասիայ ձորոյն հարաւային արեւմտեան մա-
սըն : Անկէ անդին կը սկսին գետինն իջնել,
ու քարամբք ծածկուելով՝ անապատի կերպա-
րանք կ'առնու, ուր կը վիտան անհամար
բազմութիւն մարախից, ճամբուն միակեր-
պութիւնը զուարթացընելու համար, մեր նոր
չափաբք՝ հաճոյական խանդերդ մը կը կազ-
մեն, որով եռանդ, չարժում և արշաւանաց
մրցութիւն մը երեսան կ'եննէ մարդկանց և
երիվարաց վերայ :

Ժամը իննին Արդուբատէն Զուղա տանող
ճամբուն վրայ ենք. և հոն, 900 մետր բարձր
ծովու երեսէն, ճանապարհորդաց հանգստի
կայան մը շինուած է : Կը մեկնիմք ապա ընդ
անապատ դէպ ի յաւեթակս, որ ըստ գեղաց-
ւոց՝ միացորդք են Փարապաղիլան կոչուած

հին քաղաքի մը, և ամփիթատեր ձեւով կը
բարձրանան երկու բլրոց վերայ, և որոց մէջ
տեղ տարածուի բարձրէն վազած լրերէն ձե-
ւացած ընդարձակ հեղեղատ մը :

Անկարելի է խօսքով բացատրել այս մե-
սեալ քաղաքի ցամաքութիւնն և միայնու-
թիւնը. չկան ոչ ակունք և ոչ աղբերք լրոց
և ոչ կանաչ դաշարութիւն. այլ ուր որ աչքդ
դարձնես՝ չոր քարեր, ու արևուն. կիզիչ
ներմութենէն հրացած կրացած կու : Անտա-
րակոյս աւան մ'էր, Մեղրիի հաւասար
կարեւորութիւն ունեցող, և որոյ աւերակ
դառնալն ու երեսի վրայ մնալը՝ Շահաբա-
սայ եօթնետասնեորդ դարու մէջ արշա-
ւանաց և ասպատակութեանց հետեւանք է
անշուշտ :

Ի՛նչ ի հիւսիսակողմն՝ շատ քիչ անկեր-
պարան կոյտերու վերայ՝ երեք քառակուսի
շինուածոց միացորդք կը նկատուին՝ կամա-
րակապ գմբէթաւորք, որոց վրայ ոչ արձա-
նագրութեան հետք մը կայ և ոչ ալ զարդու-
շինութեան նիւթեր տեղւոյն քարերէն առ-
նուած են, աւազսխառն թերթահերձք, խո-
շոր աղիւսի ձեւով կտրած : Հեղեղատին աջ-
կողմը կը բարձրանայ բերդի նման շէնք մը
մասամբ քանդուած աշտարակներով. թէպէտ
անոնցմէ մին դեռ եւս եօթն կամ ութ մետր
բարձրութիւն ունի և կ'երեկ թէ կոնաձեւ
երկայ : Հեղեղատին ծայրն ալ 40 է 30 մետր
բարձրութիւն կ'ունենայ և 13 լայնութիւն ունեցող
ընդարձակ փակոց մի, յորում պիտի ամբա-
րուէին անձրեւացիւրք, երայտութեան ժամա-
նակ՝ որ յաճախ կը հանդիպի այն կողմեր,
դաշտաց ռազմաւան համար :

Առաջ երթալով, ութանկիւնի շէնք մ'ալ
կը տեսնեմ, բրգաձեւ ծածքով, պզտի շէնք
մը, գերեզմանական փոսի մը վերայ բարձրա

ցած: Եւ թէպէտ կը գուրցուի թէ առաւօտ-
թիւն է օձից այն կողմիւրը, բայց մենք հետ-
քէն ալ չտեսանք. միայն մեծ մողիգը և մա-
րախայ անթիւ բազմութիւն այն չոր առանձ-
նութեան ընդարձակութիւնը բռնած էին:

Քարքարաւոր երկրին և աւերակաց կոյտե-
րուն մէջ կ'աճի Ճանկուկ (Drypis spi-
nosa), Գարապաղիւսնի միակ բուսականու-
թիւնը, որ և այն զիրկն է ի բուն գեղոյ դա-
լարութեան: Թէպէտ տարաբախի է հողոյն
մերկութիւնն, բայց օդոյն ջերմութիւնը չա-
փաւորապէս բարեխառնուած է մերձաւոր
լեռներէն փած ցուրտ հողմովը՝ որոց դա-
գաթունքը ձիւնապատ են միշտ, որով Երաս-
խայ հովտին մէջ ճամբորդութիւնն ընողն,
մինչ մէկ կողմանէ կ'զիզէ ջերմութենէ կը նե-
ղի, երեսը լեռանցակողմ դարձուցած ատեն՝
ձիւնային զիփիւռի մը զովութեամբ կը հեշ-
տանայ:

Չկարենալով հանգուրժել յերկարել մեր
այցելութիւնը, կը փութանք ճամբայ ելնել՝
գրեթէ կիսով աշուրնուս լոյսը կորուսած ա-
րեւուն անդրադարձութենէն կաւախել կոյտե-
րու վրայէն որովք չընկալատուած է քաղաքը:

Հիլլանի ակնահաճոյ ու զով և մաքուր չիւ-
րով գետը անցնելէն ետքը, ուր մեծ ախա-
տութեամբ հազիւ կը յաղորդի զերծուցանել
երկվարս միջատաց խուռն յարձակմանէն, կը
ժամանեմք ի գիւղն Ալա, կողակաց հանքառա-
նին մօտ, ուր և կը հանգչինք: — Ովասիս
եւ երեքսա ինձ Ալա քարերով շնչողութե-
տեւր այն անապատին մէջ. սրածայր լեռանց
ստորոտը՝ որ իրենց փոփոխական կերպա-
րանքով տարածուած սփռած են, որչափ աչքդ
կը զօրէ, ամենալինջ կապող երկնքի մը գե-
ղակամարին վերայ. Երասխայ հովտին կայ
մասը բանաստեղծական վայրագ տեսիլ
մ'ունի: Անմոռանալի տեսարան մ'է այն ներ-
դաշնակութիւնը՝ զոր հողոյն, լրոց և Պարս-
կաստանի լեռանց հայտնի վրայ եղող ձիւնն.
բուն վրայէն կարմրագեղ այնչափ տարօրի-
նակ և մեծավայելուչ է, մանաւանդ որ հով-
տին չորս կողմի դառ կ'վեր տեղուանք աւե-
լի տարօրինակ և գուրազնացք են ուղեա-
րացս՝ համար, Թերթահէրձ և աւազաքարինք
են կարմիր գոյնէ մինչ ի դեղին ամեն կա-
րելի աստիճանօք գունաց, մերթ չիտակ վերէն
վար բարձր և մերթ թաւալզլոր տապալած:
Աստիս անդին ալ ոսկեհունձ ստոգ գորենոյ
դաշտեր աւելի նկարագեղ կ'ընեն տեսարանը:

Պտոյտ մը միայն Ալա գիւղին մէջ գաղա-
փար տուաւ ինձ Երասխայ միջին հովտին
տեսնելու բաներուն, այսինքն կուտայ և չի-
տակ ծածք ունեցող տանք՝ նուազ կամ աւելի
թուով ըստ տեղւոյն և բնակչաց թուոյն:

պտղատու ծառոց դալարութեան մէջ ծած-
կուած թթենիք, կաղամախք և սօսիք, Գրե-
թէ հարիւր քսան են տունք յԱլա, և բնա-
կիւնք հայազգիք, որ իրենց ծագումը Գարա-
պաղիւսնէ կը համարին:

Ալա գեղէն անդին ճամբան աւելի կը դը-
ժուարանայ, և հարկ է անցնել ցորենոյ և
բրնձի դաշտերէն, և ոռոգման համար բա-
ցուած լրանցքներէ, և ամենավտանգ հեծե-
լոց համար պատճառաւ այն ծակերուն զոր
գոմէշք կը բանան՝ անոնց մէջ պառկելու
համար: Եւ ճիշդ՝ չափարին մէկը որ ուղե-
ջոյց էր մեզ՝ յանկարծ ձիւնէ անհետացաւ
աչքերնէսդ այն որջերուն միոյն մէջ զլորե-
լով, ուստի հազիւ կրցաւ ելնել թրված զգեստ,
ներով և վիրաւոր գլխով. — Անցանք Խատի
գիւղէն, ապա սահմանապահ հանգրուանէ մը՝
միշտ այրող արևով մի: Երկու վերստ անդին
կը նկատեմ զՋուղա, ուր կը հասնիք դաշտէ
մ'անցնելով որ այս միջոցիս ծածկուած է
ուղտիք և կ'արածին յեմ գիտեր ինչով. ու-
րովհետև երկիրը սրափուշ և ուռենի ծառերէ
զատ ուրիշ բուսականութիւն չունի: Դանդա-
ղաքայլ կը մօտենան որոճող կենդանիքս և
մեծ մեծ ալուրներով գմեղ լաւ մը դիտելէն
յետոյ կը մեկնին ծանր ծանր: Կը հասնիք
վերջապէս Ջուղայի մաքառաւան կայանը, փո-
շելից հողոյ վերայ բարձրացած չէնք մը, յե-
զերս Երասխայ, ի հանդիպոյ պարսիկ մաք-
ստանն: Տեսուչն Ողէրէպէ, որուն արգէն
ծանօթացիք էինք յՈրդարատ, մեր տրամա-
դրութեան կը թողու հոգաբարձութեան յա-
տուկ չէնք մը ստորին յարկը, զգուշացնելով
ի կարճից և հոկա մամուկներու բազմութե-
նէն: Խնամով մեր սենեկին ամէն անկիւն-
ները մանր քննելէն ետքը, գիշերն որ կը
հասնի ուր ուրեմն կ'որոշեմ անկողինս հանգ-
չիլ: Հազիւ թէ կը մտնեմ, և ահա բազ-
մութիւնք մտնակաց և փայտոյիլք մը թափին
արեւնս քամելու: և այնչափ կը նեղուիմ ու
կը տառապիմ՝ որ կենացս մէջ առաջին ան-
գամ կը վհատիմ լքմամբ: Թող օդոյն ջերմու-
թիւնը, որովհետև մեր սենեկին բարեխառ-
նութիւնն երեսուն աստիճաննէն վեր է:

Դրսէն կը լսուի ուղտուց զանգակիկներուն
մենաձայնութիւնն, որք անվերջանալի չարքով
գիւեր ցորեկ կ'անցնին ու կը դառնան, ապ-
րանքը Պարսից սահմանագլուխը փոխադրե-
լով: Անպատում ուրախութեամբ կ'ողջունեմ
օրուան ծագումը, որ իրեն նեղիչ ջերմու-
թեամբն ալ հարիւրապատիկ նախամեծար է
քան անդուն և տաքանապալից գիշերներն:

16 յունիս. — Պարսից հողն անցնելուս
հեռագիր մը կ'ընեմ համազգային թղթա-
տարութեան միջոցաւ, ու չորսոյ վերայ կրկին

անգամ անցնելով ընդ գետն Երասխ, մեծ հանդիս կ'ըլլամ անդադար անցուղարձի մարտկալն, ապարանաց և հօտից գետին մէկ ափունքէն ցմիսն: Այդ ափունք՝ աւազակոյտ անապատը են, ուր ամառուան մէկ մասին միայն հով կը փչէ: Ոչ մօտաւոր շուր ու նին, ոչ ծառ մը, ոչ կանաչեղէն կամ պտուղ տուտը և ձանձրալի կեանք մ'ունին հոն զրկուած պետական պայտօնակատարը:

Աստի երեք վերստ հեռի է բուն Ջուղա կոչուած քաղաքն:

Մաքսատան տեսուն այս առաւօտ ներկայացոյց մեզ Գեորգ անուն դավրիժեցի մը, խանգարեալ ուղեղով անձ, ճանապարհորդութեանց մեծամոլութիւն ունեցող: Փասն տարուան եմ կ'ըսէ, բայց երեսէն երեսնաւ մեայ կը թօւի, և թէպէտ ով ըլլալը չգիտցուի, բայց կ'երեւի թէ չափաւոր կրթութիւն մ'առած է, որովհետեւ համարձակ կերպով կը խօսի պարսիկ, թաթար և հայ լեզուներով, ինքն ալ հայագրի ըլլալով: Բուսերէնի ալ բաւական վարժ է, գիտէ արաբերէն երգել և բացատրել միտքը, և իմ մեծ զարմանքով մեծ վարձութիւն ալ ունի գաղղիական լեզուի բացատրութեանց, և կ'ըսէ թէ ի մանկութեան կանոնաւոր ուսումն ըրած է: Հոս ընկած կ'ըլլալով, մէյմը միոյն մէյմը միւսին քով կ'ապրի, մերթ ծառայութիւն, մերթ խոհարարութիւն, գործակատարութիւն և երբեմն միմոսի և խեղկատակի դեր կատարելով: Այս վերջին պարագայմը մեծ աւուն տուցած է Ջուղայի պարսիկ և թաթար ժողովրդեան մէջ՝ որ ամէն երեկոյ աստեղագարը երկնից ներքեւ մեծ հանդիս և զմայլմամբ ունկնդիր կ'ըլլան իր առապել պատմութեանց և երգաց: Մեր ժամանման լուրն առնելուն մաքսապետը հանգիստ չի ձգեր և ոչ վայրկեան, կ'աղաչէ կը թախանձէ որ մեր ծառայութեան գործածենք զինք՝ իբրեւ երկրորդական անձ մը: Նախկին տիրերին, անշուշտ ջովորելէն հեռացնելու դիտմամբ, կը վկայեն թէ փորձած են զինք և յամենայնի գովութեան արժանաւոր գտած, և կը ստիպեն հետնդնիս առնուլ: Սակայն Դանար միշտ զգէմ կը զնէ, ու չուզեր յանձնառու ըլլալ այնպիսի թեթեւ գլուխ անձ մը կարաւա նին հետ խառնելու:

Մաքսատէն մինչև յաւերակս հին Ջուղայի թէպէտ ուժ վերստ հեռաւորութիւն է ուղւոյ, բայց այնչափ անհարթ են հանապարհէ որ հոն երթալու համար կառաց ծախք վճարեցիք որչափ մինչ ի Նախիջևան: Աշխոյժ ու եռանդուն երկվարք ընկած են կառքին, և այնպիսի երազութեամբ կը յառաջնէ որ ամէն վայրկեան ահուդողի մէջ եմ որ ու-

կերքս չխորտակին. և թէպէտ կառավարին անհոգութիւնը մեծ երաշխաւորութիւն է վրտանդի չնթարկուելու, սակայն և այնպէս լաւ կը համարիմ գնացքին մէկ մասը ոտքով ընելու:

Աշխողմը թողով արդի գիւղը, կը ժամանեմ յԵրասխ, որ անիւն մը կը ձևացունէ, ապա զառիվեր կիրճ մը՝ անապատ և միայնացեալ, ու քանի մը վայրկեան յառաջնելով ընդ ալ, կը հասնիմք տափարակ դաշտ մը քիչ բարձր քան զգետն, ծածկեալ աւերակք: Հոն կը բարձրանար երբեմն հին և անուանի քաղաքն Ջուղա, որոյ հիմնարկութեան ժամանակն Հայոց պատմութեան առաջելակն ժամանակաց կը հաննէ. և յիշատակուած է այն քաղաքաց և աւանաց հետ զորս Տիգրան Ա. սահմանեց ի սեպականութիւն ընտանեաց Ատահակայ: Մերձաւորութեամբ Երասխ գետին և զրից քաղաքակութեամբ Նյաւատանի ամենէն աւելի հարտաբանար, վաճառաշահ և հարուստ քաղաքաց մէկն եղաւ, և ամենամեծ յալողութեան միջոցին այդ աշխատասէր և բազմամարդ քաղաքը՝ հայ պատմութեան մէջ տխուր յիշատակ թողուցող Շահաբասէն: Ամբողջ քաղաքը հրդեհել տուաւ, և քառասուն հազար բնակիչ հրաման տուաւ մէկէն Սպակոն գաղթելու: Իթիկեռտանեերող դարուն սկիզբը կը հանդիպէր այս աղիտալի արկածն: Ահաւարկ հրամանագիրը զոր յանուն Շահաբասի հրատարակեցին պատուիրակք Թլուռն քաղաքին մէջ, և լսեցէք ամէն բնակիչք Ջուղայի, մեծ թագաւորն Շահաբաս կը պատուիրէ՝ հետը ընկերելով անցնիլ ի Պարսկաստան: Պատրաստուելու համար երեք օր շնորհուած է ձեզ: Ով որ երեք օրուէն ետք դեռ հոս գտնուի, մահուան պատուաւ պիտի կրէ, և ասացուածքը գրաւուն յարգունիս իսկ ծածկուող կամ փախչողը յայտնողն, անոր ընչից տէր պիտի ըլլայ, իսկ զլիտն թաքաւորը 3:

Երբ պայմանեալ ահաւոր օրն հասաւ, քահանայքն և բնակիչք՝ իրենց եկեղեցեաց ու տուներու բանալիք հետերնին՝ ժայռին վերայ Ստուռածամբ նուիրուած եկեղեցին երթալով, իրեն կը յանձնէին արտասուտին հառաչանք իրենց սիրելի քաղքին պահպանութիւն, ու բանալիք Երասխայ լոց մէջ նետելով կը մեկնէին:

Այդ մեծ և բազմահարուստ քաղաքին տեղ աւերակք միայն կը տեսնուին այսօր: Թագաւորին հրամանաւ լոցը աղբերք ցամբեցան, չորութիւն և անարդաւորութիւն յալորդեք բարեբերութեան, մահը կենաց: Որպիսի նեղութիւնք, յոսահատութեան և արատաւաց

աղիողորմ հառաչանք կը լսուէին այն տա-
րարադղիկ քաղաքի բերնէն որ կանամբ
է որդուով կը թողուին իրենց ծննդավայրը,
հայրենի տունն ու տեղը, նախնեաց և սի-
րելեաց գերեզմանները: Կարծես թէ այնչափ
է այնպիսի արտասուաց ակննատես վկայ
քաղաքի իրեն լուրջ գեղոյն մէջ դեռ եւս կը
պահպանէ մեղամաղձիկ տրտմութեան մը յա-
ւիտենական ցոլացում մի:

Շատ վրտտից տարածութեամբ աւերակոյ
ծածկուած է երկիրն: Շինուածոց ներքեւ ա-
ւազախառն գոյնզգոյն քարինք էին, կարմիր
կաւով շաղախուած, և ճարտարապետական
արուեստի կարեւորութիւն ունեցող բան մը
չորեւեաց աշխարհ: Միայն սափա անդին է
կեղեցեաց աւերակք կը տեսնուին, որոնց
մէջ չկայ քանդակի և կամ գրուապաշ հետք:
Նշանաւոր շինուածք հրոյ ճարակ և ապաքե-
րուած բլլալով, դժուարին է հիմայ քաղաքին
նախկին կերպարանաց վերայ գաղափար մը
կազմել մաքուր:

Ջրային կոնսեկց կը սուլեն տիրածայն
կրասայ ափունքը թաւալած մեծ քարերու
վերայ, ամենին չխրտելով մեր ներկայութե-
նէն, ուր ընդ հակառակն արեւուն ներքեւ ջեր-
մացող մեծամեծ մողէզք տազանապաւ կը
փախչին: Կը հասնինք գերեզմանատան առ-
ջեւ, որոյ այնչափ է ընդարձակութիւնն որ
բարձր և իրարու մօտ կանգնուած մահաբ-
ձան կոթողք քարացած անտառի մը կեր-
պարանք կ'ընծայեն: Տեսիլը միայն տեղոյն
կ'իմացնէ մեզ, թէ հոն իրենց գերեզմանաց
վերայ սովոր էին Հայք իրենց ճոխութիւնը ցու-
ցնել: Կրկին քարերէ ձևացած են գերեզ-
մանավայրք: մին չիտակ հողոյն վրայ տարա-
ծուած, միւսն սուլուած է գլուխ չիրմին՝
գրեթէ ունելով միշտ քանդակներ և արձա-
նագրութիւնք: Այս կանգուն քարերուն մէջ
որ բազմութիւն խաչերով զարդարուած են,
կան ուրիշ գերեզմաններ ալ որոց կոթողք
կենդանեաց, և մանաւանդ խոյից կերպա-
րանքով են: Եւ վրանին տեսնուած քանդակք
այլարանական նշանակք են, ու մեր նաև
որանանագրութիւնք: Բայց չկան խաչք և ոչ
ուրիշ քրիստոնէական հետք: Այս խոյից մէջ
ամենէն հետաքննականն, զոր արդէն ակն-
արկած են Քէր-պորը և Դիբաւս Մոնտ-
պէրացի, հնձեւալ մը կը ներկայացնէ որ ի
գաւակ երկվարին զեր ալ տղայ մը կը տա-
նի: Ետէն ալ հետի ուրիշ երեք կալանաւորք
պարանակապք: Նոյն հնձեւան ուրիշ տեղ
գանդակուած է նստակ ի սեղանի: և դի-
մացն երկու գերեթ, մին ի ծունկս՝ Կինի
մատուակելով, և միւսն երաժիշտ մը՝ որ
կիթառը մատուռներով կը թրթաջնէ:
Այս հետաքննական մահարձանին երեսը դը-

րուած գրութիւնը կ'իմացնէ թէ 1578ին
կանգնուած է Մանուկ Նազարի գերեզմանին
վերայ: Կոթողք ընդհանրապէս երկու մետր
բարձրութիւն ու 50է 70 հարիւրմ: լայնու-
թիւն ունին, նոյն կարմրագոյն աւազային
քարերէ: Այնպէս լաւ պահուեր են որ կար-
ծես թէ երէկ կանգնուած ըլլային: Խաղաղու
հետ սրբոց դէմքեր ալ կը տեսնուին, աս-
տուածայնի պատմութիւններ առնուած քան-
դակք, ինչպէս նաև երևակայեալ կենդանեաց
կերպարանք, թեւաւոր հրէշային ցնորք, թռ-
չունք, և յանախ՝ պարսկային սփինքս կըր-
կին մարմնով և ի միջավայրի միազլխան: Անոց
վերայ աւելցնել արժան է անթիւ
երրորդականաց գծապատկեր, արարելի զարդք
ամենագեղ ախորժակաւ և արուեստի յօրի-
նեայք, և արժանաւորք թանգարանաց մէջ
ի տեսիլ գրուելով պահպանուելու:

Լեռան մերկ ապաւածին վերայ, որոյ ի
ստորոտ կը տարածուի գերեզմանավայրն,
շալար բուսականութեան կէտ մը կ'երեւի
ի հեռուստ, հոն եղող աղբիւրէ մը ռոտուած
է մասամբ կը ծածկէլ զպոտ և առանձնակ
մատրան մէկ մասը: Երկար ժամանակ գե-
րեզմանավայրի մէջ չըլազայելէն ետքն ա-
ռանց տեսնելու և ոչ մէկն այն երկրիւայի
կիրեններէն որովք լի է կ'ըսեն տեղին, ճամ-
բանիս կը փոխնք, և կը հանդիպինք աւե-
րակաց՝ հաշակեալ կամրոյն Ջուզայի՝ Երաս-
խայ վերայ, որոյ շինութիւնն անկախելի կը հա-
մարուէ և իբրու հրաշալիք: Կամրոյնը քան-
դող և աւերելու կոյած էր զԵրասխա՝ քերթողն
Վիրգիլիոս: Pontem indignatus Araxes.
Կ'աւանդեն, թէ Շահաբաս նկարելով գետին
մէջ տնկուած մոյթից յամառ կտիւն և գե-
մարդութիւն ընդ այեւա, ըսեր է քովինե-
րուն: « Տեսէք ինչպէս պէտք է թշնամեաց
հետ դիմադարտիլ: — Այո՛, տէր արքայ,
եբր այշպիսի հզօր նեցուկ ունին » պատաս-
խան տուեր են, ցուցնելով այն ապաւած
ամրութիւններն որ նոյն տեղոյն գետին ան-
կողինը կը պատեն:

Արդէ Ջուզայ գիւղը կառուցուած է ի ստո-
րոտ ընդարձակ կարմրաքար գառիվերի մը
վերայ, յորոյ ի գլուխ կը տեսնուին աւերակք
հին քերդին որ ամուր պաշտպանութիւն էր ձո-
րոյն, ի խառնորդս Ալինճայիի և Երասխայի,
հինգ վերտա հեռի դէպ ի հեռախային արեւ-
մուտք: և ինչպէս Երասխա, այսպէս ալ Ալին-
ճա՝ կ'ընթանան ընդ արեւմտացոյն աւազաքա-
րանց բարձր անլրպետս: և մերձ այդ գե-
տախառնունց կը բարձրանայ Դարուտաղ
լեռան՝ քարահանքով անտանի, ռաւա կ'ա-
նուին երկանաքարք, և կը վաճառուին Նա-
խիվեանի անունով: Հայաբնակ է գիւղս, և
անհանդուրժելի աղտեղութեամբն: